ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.05.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/68

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի 11.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ԱՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ ուսումնասիրելով «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով առողջության ապահովագրության ծառայության գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 Արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն/ գտնում է, որ այն կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

1.Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

Ծածկագիր՝ թիվ «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01»

Առարկա՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերումը բաց մրցույթի ընթացակարգով գնում մեկ չափաբաժնով:

Պատվիրատու՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ /հասցե՝ք. Սևան, Կարմիր բանակի 56/:

2.Վեճի առարկան, համանման բողոքի փաստերը և իրավական հիմքերը.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է բաց մրցույթ թիվ «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպություն/ և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն:

06.04.2018թ.-ին ժամը 16:40-ին հրապարակվել է պայմանագրի կնքման վերաբերյալ հայտարարությունը, որում նշված է, որ Ընկերության կողմից ներկայացվել է նվազագույն առաջարկ և գնահատման հանձնաժողովն ընտրել է հաղթող մասնակցին՝ ներկայացված պահանջներին համապատասխանող գնային նվազագույն առաջարկ ներկայացնելու փաստի ուժով: Անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օրը: Նշված հայտարարությունը Ընկերությանն է ուղարկվել 12.04.2018թ.-ին:

Ընկերությունը կնքված պայմանագիրը միևնույն՝ էլեկտրոնային տարբերակով 27.04.2018թ.-ին ուղարկել է Պատվիրատուին, իսկ 02.05.2018թ.-ին չնայած ստեղծված ներքաղաքական վերջին զարգացումների հետևանքով փողոցների անանցանելիությանը՝ Սևան քաղաքում հանձնել է պատվիրատուին, որը սակայն չի ընդունվել վերջինիս կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Արձանագրության 2.1.1 կետով Հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները՝ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետով սահմանված հիմքերով ուղարկել լիազորված մարմին:

Գտնում ենք, որ Արձանագրությունը զրկված է իրավական և փաստական հիմքերից հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

«2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է»:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

«Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:

Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների՝ առանձնացված մասերի համադրական վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ անգործության ժամկետի ավարտից հետո Պատվիրատուն պետք է Ընկերությանն ուղարկեր պայմանագիրը կնքելու ծանուցում և պայմանագրի նախագիծ: Հարկ է նկատել, որ պայմանագիրը կնքելու ծանուցում Ընկերությանը չի ուղարկվել, այլ ուղարկվել է միայն պայմանագրի նախագիծ: Նշված Նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օր հետո ստորագրված և հաստատված էլեկտրոնային տարբերակով ուղարկում է պայմանագիրը Պատվիրատուին՝ 27.04.2018թ.-ին, իսկ 02.05.2018թ.-ին ներկայացնում է նաև՝ նշված պայմանագրի թղթային տարբերակը:

27.04.2018թ.-ի դրությամբ երկրում ստեղծված ներքաղաքական պայքարի արդյունքում փակված փողոցների պատճառով Ընկերությունը /հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, Հանրապետության հրապարակ/ հայտնվել է փաստացի փողոցների անանցանելիության և

շրջափակման մեջ, որի հետևանքով չի կարողացել նույն օրը Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի թղթային տարբերակը, այլ ներկայացրել է 02.05.2018թ.-ին:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը»:

Այսպես՝ 12.04.2018թ.-ին Ընկերության կողմից ստացվել է պայմանագրի նախագիծը: Նշված օրվան հաջորդող օրվանից՝ 13.04.2018թ.-ից սկսում է հոսել 10 աշխատանքային օրվա ժամկետը:

24.04.2018թ.-ը համաձայն «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր»:

13.04.2018թ.-ից տասն աշխատանքային օրը լրանում է 27.04.2018թ.-ին:

27.04.2018թ.-ին Ընկերության համապատասխան աշխատակիցն ստորագրված պայմանագիրն ուղարկել է Պատվիրատուին, իսկ 02.05.2018թ.-ին՝ 27.04.2018թ.-ին հաջորդող աշխատանքային օրը՝ առաքել է այն քաղաք Սևան, սակայն չի ընդունվել Պատվիրատուի կողմից:

Ստացվում է, որ Ընկերության կողմից Օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ուղղված պայմանագրի կնքմանը, սակայն բոլոր այդ գործողությունները մերժվել են Պատվիրատուի կողմից:

Արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի նախագիծն ստանալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը: Պայմանագիրն ստորագրելու մասով արդեն իսկ նշել ենք մեր նկատառումները: Ինչ վերաբերում է Պայմանագրի ապահովում ներկայացնելուն, ապա սույն գործով գործ ունենք այն իրավիճակի հետ, երբ կնքվելիք Պայմանագրի 7.15-րդ կետի համաձայն սահմանված է, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է: Այսինքն՝ տվյալ իրավիճակում Պայմանագրի ապահովման ներկայացումը պետք է հաջորդեր պայմանագրի կնքմանը և համապատասխան ֆինանսների առկայության պարագայում:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 16.05.2018թ. բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Համարելով պայմանագրի վերջնական տարբերակի ստացման օրը 10 աշխատանքային օրվա ժամկետի մեկնարկի օր, և այդ փաստի հաստատումն ստանալով էլեկտրոնային նամակով Պատվիրատուից, Ընկերությունը պատշաճ կերպով ստորագրված և կնքված պայմանագիրը էլեկտրոնային տարբերակով 27.04.2018թ.-ին ուղարկել է Պատվիրատուին /պայմանագիրը մեր կողմից ստորագրվել և թվագրվել էր 26.04.2018թ.-ին/, իսկ 03.05.2018թ.-ին չնայած ստեղծված ներքաղաքական վերջին զարգացումների հետևանքով փողոցների անանցանելիությանը՝ Սևան քաղաքում նույն պայմանագիրը՝ թվագրված 26.04.2018թ.-ով, որի էլեկտրոնային տարբերակն ուղարկվել էր 27.04.2018թ.-ին, հանձնել է Պատվիրատուին, որը սակայն չի ընդունվել վերջինիս կողմից:

Հատկանշական է սակայն, որ Պատվիրատուի կողմից որևիցե արձագանք, առարկություն, կամ դժգոհություն չի հետևել 27.04.2018թ.-ին Պայմանագրի էլեկտրոնային կարգով ուղարկմանը, ինչն Ընկերությանը ևս մեկ անգամ հավաստիացրել է, որ Պատվիրատուն որևէ խոչընդոտ չի առաջացնի պայմանագրի թղթային տարբերակի առաքման ժամանակ:

Ստացվում է, որ Ընկերությունը Պայմանագրի՝ կնքման ենթակա տարբերակը ամբողջ փոփոխություններով համալրված վիճակում ստացել է միայն 12.04.2018թ.-ին: Ընդ որում՝ Պայմանագրում միակողմանիորեն կատարված փոփոխությունները, որոնցով կնքման ենթակա Պայմանագիրը տարբերվում է Հրավերում ներկայացված Պայմանագրից, ընդունվել են Ընկերության կողմից և Ընկերությունն սկսել է Պայմանագրի կնքման գործընթացը 12.04.2018թ.-ից, ինչն էլ նշանակում է, որ Պայմանագրի կնքման համար Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրվա ժամկետն սկսել է հոսել հենց վերջին պայմանագիրն ստանալու օրվա հաջորդ օրվանից:

Բողոքին կատարվող նույն լրացմամբ ցանկանում ենք ավելի մանրամասն անդրադարձ կատարել Արձանագրության 2.1.1 կետին, որով Հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները՝ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետով սահմանված հիմքերով ուղարկել լիազորված մարմին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որին հղում կատարելով Պատվիրատուն ցանկանում է Ընկերությանը զրկել պայմանագիրն ստորագրելու իրավունքից, սահմանում է, որ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է վերլուծության ենթարկել մասնավորապես Օրենքի վերը նշված հոդվածի «բ» ենթակետով սահմանված «պայմանագիրը կնքելուց հրաժարվել» բառակապակցությունը:

Այսպես. վերլուծելով նշված եզրույթը՝ պարզ է դառնում, որ տվյալ իրավիճակում, որպեսզի այս կամ այն անձը համարվի պայմանագիրը կնքելուց հրաժարվող, ամենայն հավանականությամբ պետք է տեղի ունենա երկու տեսակի գործողություն.

1.Պայմանագրի կնքումից հրաժարվելու ակտիվ գործողություն /գրավոր հրաժարում, պայմանագրի կնքմանը խոչընդոտում և այլն/:

2.Պայմանագրի կնքումից խուսափելու, անգործություն դրսևորելու գործողություն:

Մինչդեռ Ընկերության կողմից կատարված և ոչ մի գործողություն չի կարող ընկնել նշված սահմանման տակ, քանի որ Ընկերության կողմից իրականացվել են բոլոր հնարավոր և իրական գործողությունները, որոնք՝ Պատվիրատուի կողմից պատշաճ ընդունվելու դեպքում, դրանք պետք է հանգեցնեին պայմանագրի կնքման: Ստացվում է, որ Ընկերության կողմից ձեռնարկված բոլոր միջոցները հանդիպել են Պատվիրատուի կողմից բացասական արձագանքի և տվյալ իրավիճակում ոչ թե Ընկերությունն է հրաժարվել Պայմանագիրը կնքելուց, այլ Պատվիրատուն:

Մյուս կողմից, ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ՝ Կարգ/ 14-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից

պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նշված իրավական նորմի լույսի ներքո անհասկանալի է, թե ինչու Պատվիրատուն չի ընդունել և պատշաճ ներկայացված չի համարել Պայմանագրի էլեկտրոնային կրիչով տարբերակը՝ նույնիսկ ստորագրության առկայությամբ:

Կարգով սահմանվում է, որ ստորագրված պայմանագիրը սահմանված ժամկետում ներկայացվում է գրավոր: Այսինքն, եթե Պատվիրատուի կողմից Ընկերության ներկայացրած պայմանագիրը չի ընդունվում, ապա դրա համար պետք է լինեն օրենքով սահմանված համապատասխան հիմքեր.

- Պայմանագիրը պետք է լինի ստորագրված,
- Պայմանագիրը պետք է ստորագրված լինի սահմանված ժամկետում,
- Պայմանագիրը պետք է լինի գրավոր /ոչ բանավոր/:

Ընկերության գործողությունները.

- Ընկերության կողմից ներկայացվել է ստորագրված պայմանագիր,
- Պայմանագիրը ներկայացվել է սահմանված ժամկետում՝ 27.04.2018թ.-ին /այս փաստն ուղղակիորեն ընդունվում է նաև Պատվիրատուի կողմից, քանի որ վերջինս իր պաշտոնական էլեկտրոնային նամակագրությամբ նշում է, որ 27.04.2018թ.-ը հանդիսանում է պայմանագրի կնքման վերջնաժամկետ/,
-Պայմանագիրը ներկայացվել է գրավոր, քանի որ այլ հավասար պայմաններում՝ եթե էլեկտրոնային կրիչի վրա առկա գրավոր ստորագրված փաստաթուղթը գրավոր չէ, ապա արդյո՞ք այն կարող է համարվել բանավոր փաստաթուղթ:

Մյուս կողմից հարկ ենք համարում անպայմանորեն անդրադառնալ բոլոր այն խոչընդոտներին, որոնք առաջացել են «անհաղթահարելի ուժի. ազդեցության պատճառով: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հստակ ձևակերպում է: Անհաղթահարելի ուժը պետք է լինի՝

- անկանխատեսելի,
- անկանխելի:

Տվյալ պարագայում փողոցների տոտալ շրջափակումները, որոնք ծավալվել են 17.04.2018թ-ից 02.05.2018թ., հանդիսանում են անկանխելի և անկանխատեսելի խոչընդոտ, ուստի կարող են տվյալ իրավիճակում գնահատվել որպես անհաղթահարելի ուժ /ֆորս մաժորային իրավիճակ/, որի առկայության պարագայում այս կամ այն պարտավորության չկատարումը /տվյալ դեպքում՝ պայմանագրի թղթային կրիչի տարբերակը Պատվիրատուին

սահմանված ժամկետում չներկայացնելը/ կարող է համարվել հարգելի, քանի որ Ընկերությունն իրապես զրկված է եղել Պայմանագիրը սահմանված ժամկետում ներկայացնելու իրական հնարավորությունից:

Վերը նշված փաստերից ուղղակիորեն բխում է, որ Ընկերության կողմից գործադրվել է լավագույն ջանքը՝ պայմանագրի կնքման ու առաքման պատշաճ կազմակերպման ուղղությամբ, սակայն Պատվիրատուն հրաժարվել է ընդունված համարել ներկայացված պայմանագիրը՝ ձևական ու ոչ էական խոչընդոտներ սահմանելով. մի դեպքում՝ համարելով, որ Ընկերության կողմից խախտվել է Օրենքով սահմանված ժամկետը /չնայած, որ նամակագրությամբ ինքն է նշել որ 27.04.2018թ.-ը համարվում է պայմանագրի ներկայացման վերջնաժամկետ/, մյուս դեպքում՝ համարելով, որ էլեկտրոնային կարգով ներկայացված ստորագրված պայմանագիրը չի համարվում գրավոր կերպով ներկայացված պայմանագիր /ամեն դեպքում գտնում ենք, որ էլեկտրոնային նամակով ուղարկված պատշաճ կնքված և ստորագրված պայմանագիրը չի կարող համարվել բանավոր պայմանագիր, իսկ եթե խոսենք թղթային տարբերակի ներկայացման մասին, ապա Ընկերությունը բազմիցս հիմնավորել է, որ թղթային տարբերակի ներկայացումն անհնար է եղել ներկայացման համար նախատեսված ժամկետներում՝ վերը նկարագրված անհաղթահարելի ուժի առկայության պատճառով/: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով հիշյալ իրավական հիմնավորումներով, խնդրում ենք.

1.Դադարեցնել «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով մրցույթի Հանձնաժողովի նիստի թիվ 4 Արձանագրության 1.1 կետով կայացված որոշումը,

2.Դադարեցնել «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով մրցույթի Հանձնաժողովի նիստի թիվ 4 Արձանագրության 2.1.1 կետով կայացված որոշումները»:

Բողոքի քննության նպատակով բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Մանե Մարտիրոսյանը:

2. <u>««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 11.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 16.05.2018թ. թիվ 25-389 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը 27.04.2018թ. էլեկտրոնային կարգով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ից ստացել է պայմանագրի ստորագրված և կնքված տարբերակը, ինչպես նաև բանավոր կարգով և էլեկտրոնային փոստի միջոցով իրազեկված է եղել, որ երկրում տիրող արտակարգ իրավիճակների պատճառով պայմանագրի փաստաթղթային տարբերակը կհասնի 02.05.2018թ.-ին: Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գրությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղվել է բացառապես օրենքի իմպերատիվ պահանջի պահպանման միտումով, սակայն Պատվիրատուն դեմ չէ Ընկերության կողմից բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչվելու դեպքում ձեռնամուխ լինել N ՍԱՊ-ԳՀԾՊՁԲ-18/01 ծածկագրով մրցույթի շրջանակներում պայմանագրի կնքման բնականոն գործընթացը վերսկսելու և ավարտին հասցնելու»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վարդան Վարդանյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի 11.05.2018թ. բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 16.05.2018թ. թիվ 25-389 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունը, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կատարված էլեկտրոնային նամակագրությունը.

««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

06.04.2018թ.-ին ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը հրապարակել է պայմանագրի կնքման վերաբերյալ հայտարարությունը, որով անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օր:

Ըստ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի բողոքում նշված փաստական համգամանքների՝ Ընկերությունը կնքված պայմանագիրը էլեկտրոնային եղանակով 27.04.2018թ.-ին ուղարկել է Պատվիրատուին, իսկ 02.05.2018թ.-ին նույն պայմանագիրը հանձնել է Պատվիրատուին փաստաթղթային եղանակով, որը սակայն չի ընդունվել վերջինիս կողմից:

Հանձնաժողովը 06.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Նույն արձանագրության 2.1.1 կետով Հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները՝ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետով սահմանված հիմքերով ուղարկել լիազորված մարմին:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուն պետք է Ընկերությանն ուղարկեր պայմանագիրը կնքելու ծանուցում և պայմանագրի նախագիծ, Մինչդեռ պայմանագիրը կնքելու ծանուցում Ընկերությանը չի ուղարկվել, այլ 12.04.2018թ. ուղարկվել է միայն պայմանագրի նախագիծ, որն էլ ստանալուց 10 աշխատանքային օր հետո ստորագրված և հաստատված էլեկտրոնային եղանակով ուղարկվել է Պատվիրատուին՝ 27.04.2018թ.-ին, իսկ 02.05.2018թ.-ին ներկայացվել է նաև թղթային տարբերակով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ 27.04.2018թ.-ի դրությամբ երկրում ստեղծված ներքաղաքական իրավիճակով պայմանավորված հայտնի իրադարձությունների արդյունքում փողոցների անանցանելիության պայմաններում Ընկերությունը՝ փաստացի հայտնվելով շրջափակման մեջ, չի կարողացել նշված օրը Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի թղթային տարբերակը, և միայն 02.05.2018թ.-ին Սևան քաղաքում հանձնել է Պատվիրատուին, որը սակայն չի ընդունվել վերջինիս կողմից:

««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը հաստատեց, որ 27.04.2018թ. էլեկտրոնային կարգով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ից ստացել է պայմանագրի ստորագրված և կնքված տարբերակը, և հայտնեց, որ բանավոր կարգով և էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացված է եղել, որ երկրում կատարվող քաղաքական հուզումների պատճառով պայմանագրի փաստաթղթային տարբերակը կներկայացվի 02.05.2018թ.-ին: Վերջինս հայտնեց նաև, որ Պատվիրատուն առարկություններ չունի Ընկերության կողմից բաց

թողնված ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ, և պատրաստակամություն հայտնեց համապատասխան որոշման ընդունման դեպքում վերսկսելու պայմանագրի կնքման գործընթացը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

• 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

• 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Հրավերի՝

• 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա

ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

• 9.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• Պատվիրատուի կողմից Ընկերությանը պայմանագիր կնքելու ծանուցում չի ուղարկվել:

• 27.04.2018թ. Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է Պատվիրատուին, իսկ 02.05.2018թ.-ին՝ 27.04.2018թ.-ին հաջորդող աշխատանքային օրը՝ առաքվել է առձեռն՝ փաստաթղթային տեսքով, սակայն չի ընդունվել Պատվիրատուի կողմից:

• Ընկերության կողմից բողոքում մատնանշված քաղաքական հուզումները ժամանակագրական առումով համընկել են պայմանագրի կնքման վերջնաժամկետին՝ 27.04.2018թ., ինչի արդյունքում Ընկերությունը չի կարողացել նշված օրը Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի թղթային տարբերակը, և միայն 02.05.2018թ.-ին՝ 27.04.2018թ. հաջորդող աշխատանքային օրը, Ընկերությունը այն կարողացել է առձեռն հանձնել Պատվիրատուին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը չի հրաժարվել պայմանագիրը կնքելուց, ավելին, թեև Ընկերությունը չի ստացել պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը, այնուամենայնիվ ամեն կերպ աշխատել է ստեղծված իրավիճակում կնքված պայմանագիրը փաստաթղթային ձևով ներկայացնել Պատվիրատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 11.05.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով մրցույթի Հանձնաժողովին ընդունել՝ «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով մրցույթի Հանձնաժողովի՝ 05.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով և 05.05.2018թ. ժամը 11:00-ին

կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2.1.1 կետով կայացված որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ